կենօք վարեաց զկեանս իւր, իբրև թագաւոր բնական մահուամբ վաղճանեցաւ 'ի կենաց Յէհ-դրալի անուամբ՝ ոմն զինուոր ըստ բնութիւնս քաջ ջանացաւ, աշխատեցաւ մինչ եղև տէր միոյ լայ-նատարած յաշխարհի անուանեալն մանսուր, զօ-րացաւ զինուորօք հարստացաւ ընչիւք փառա-ւորեցաւ 'ի փառս իշխանի լինելով տէր յաշ-խարհի և ժողովրդոց։

Եւ այժմոյս լսեմք բորբոքում նոր այսինքն ոմն իմաստուն Վաշինկթան անուամբ 'ի յազգէն բրիթանիացուց ծնեալ 'ի ամէրիկ, որում պահ-պանիւր 'ի մեծի բրիթանիացուց, սա հակառա-կել տերանց և ժողովեալ հասարակութենէ ժողո-վրդոց ամէրիկու զօրք բազում, ջանայ և աշ-խատի գտանիլ ազատութիւն և լինիլ անհնա-զանդ ումեքէ, թէպէտ կատարածն բանին դեռ ևս ոչ երևեցաւ թէ զինչ լինելոց, այլ ցանկու-թիւն սրտի ամէրիկացուց բնական է 'ի բնու-թեանս մարդոյ, քան զի ոչ գոյ 'ի յերեսս երկրի ոչ ոք առաւել քաղցրութիւն 'ի թոշակս մարդոյ քանթէ ազատութիւն։

'Ի վեր յիշեցեալ թէ ազատութիւնք, թէ տիրապետութիւնք, թէ թագաւորութիւն բոլորն 'ի փոքրականց և 'ի աղքատութենէ սկսեալ, բայց 'ի վրայ, որ 'ի ժառանգութենէ եկեալ և արի-ութեամբ պահեցեալ ուրեմն ոչ է անհնարին և ոչ յոյժ դժուարին վասն բոլոր յազգին միոյ Օ-